

ԵՐԱԿՐՈՆԵԱ ԿԱՄԱԿՐԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿՎՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

12 նոյեմբերի

Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց միությանը՝ Հայաստանում եւ Սփյուռքի համայնքներում իրականացվող հայրենաշեն ու ազգօգուտ ծրագրերի, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու գործունեությանը մշտապես աջակցելու համար: Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայոց Եկեղեցու առաքելությունն ուղղված է հայրենիքում եւ Սփյուռքում հայ ժողովրդի հոգեւոր կյանքի զորացմանը, մեր ժողովրդի միասնության ու համերաշխության ամրապնդմանը, ազգային-հոգեւոր արժեքաւանկարգի անաղարտ պահպանմանը:

Տիար Պերճ Սեդրակյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց անցած մի քանի ամսվա ընթացքում Հայաստանում եւ Սփյուռքի համայնքներում ՀԲԸՄ-ի կողմից իրականացված նախաձեռնությունների մասին տեղեկություններ, ինչպես նաեւ որոշ ընդհանուր նկատառումներ՝ համայնքային կյանքի արդյունաշատ կազմակերպման վերաբերյալ: ՀԲԸՄ-ի նախագահը հաստատեց, որ միությունը մշտապես շարունակելու է զորակցել Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու գործունեությանը եւ ազգանպաստ ծրագրերին, ինչպես նաեւ Սփյուռքի ազգային ինքնությանը եւ հայապահպանությանը ուղղված ջանքերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահն անդրադարձան Հայ Եկեղեցու պատմական անցյալին եւ ներկա իրավիճակին՝ մեծապես կարեւորելով Եկեղեցու դերակատարությունը հայ ժողովրդի ապագայի կերտման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահն անդրադարձան Հայ Եկեղեցու պատմական անցյալին եւ ներկա իրավիճակին՝ մեծապես կարեւորելով Եկեղեցու դերակատարությունը հայ ժողովրդի ապագայի կերտման գործում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանում տեղի ունեցող քաղաքական փոփոխություններին եւ զարգացումներին:

Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց նրան:

Հանդիպմանը Նորին Սրբությունը խոսեց հայրենիքում բազում մարտահրավերների առկայության մասին: Կարեւոր նկատելով առաջիկայում կայանալիք խորհրդարանական ընտրությունները՝ Հայոց Հայրապետը մաղթեց, որ դրանք անցնեն խաղաղ եւ համերաշխ մթնոլորտում՝ նպաստելով հայ ժողովրդի, Հայաստանի բարի անվան եւ հեղինակության բարձրացմանը:

Շնորհակալություն հայտնելով բարեմաղթանքների համար՝ տիար Նիկոլ Փաշինյանը հավաստիացրեց Վեհափառ Հայրապետին, որ առաջիկա խորհրդարանական

ընտրություններն անցկացվելու են խաղաղ ու հանգիստ մթնոլորտում: Պրն Փաշինյանը խոսեց նաեւ Հայ Եկեղեցու՝ հայ ժողովրդի կյանքում ունեցած բացառիկ դերակատարության մասին՝ հաստատելով, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին ազգապահպանության կարեւոր առաքելություն է իրականացնում:

Վերջում Հայոց Կաթողիկոսը մաղթեց ՀՀ վարչապետի պաշտոնակատարին Աստծո օգնականության եւ օրհնության ներքո իրականացնել իր անչափ պատասխանատու առաքելությունը:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

26 նոյեմբերի

Նորած քահանաներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հոկտեմբերի 7-ին ձեռնադրված յոթ քահանաներին, որոնք ավարտելով իրենց պատրաստության եւ պահեցողության քառասնօրյա շրջանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ այցելել էին՝ ստանալու Հայոց Հոգևորականության օրհնությունն ու հայրական թելադրությունները՝ քահանայական իրենց հետագա ծառայության վերաբերյալ:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը փոխանցելով քահանա հայրերին, հորդորեց նրանց ամենայն պատասխանատվությամբ եւ հանձնառությամբ անձնդիր ծառայություն բերել ժողովրդին ու Եկեղեցուն: Նորին Սրբությունը նորած եկեղեցականներին հավաստիացրեց, որ անսակարկ ու անփոփոխ սպասավորությամբ միայն կարող են արժանանալ ժողովրդի սիրուն, հարգանքին եւ ուշադրությանը՝ բարձրացնելով նաեւ Հայոց Եկեղեցու հեղինակությունը: Հայրապետը պատգամեց քահանաներին լինել ազնիվ, քաջ ու անփոփոխ՝ հոգով իրենց անմնացորդ սերն ու մշտական հայրական խնամքը ցուցաբերելով հավատալիքով:

Քահանաներին հանդես:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը նորածներին ընծայեց մասնատուփեր ու ձեռնաց խաչեր՝ մաղթելով Սուրբ Հոգու առաջնորդությունն իրենց հովվական առաքելություն մեջ:

Նորին Սրբության հայրապետական տնօրինությամբ քահանաներն ստացան նոր նշանակումներ:

Սիոն քին. Հայրապետյանը ծառայության կոչվեց Ռուսաստանի եւ Նոր Նախիջևանի հայոց թեմում: Գեւորգ քին. Աբրահամ իր սպասավորությունը կբերի Ուկրաինայի հայոց թեմում: Նարեկ քին. Տիգրանյանը ծառայության կմեկնի Վիրահայոց թեմ: Նահապետ քին. Կարապետյանը եւ Տաճատ քին. Բարսեղյանը իրենց ծառայությունը կբերեն Գուգարաց թեմում: Աստվածատուր քին. Սարգսյանը կբաժանակարգվի Արեւմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակությունում: Երեմիա քին. Սարգսյանը ծառայության կոչվեց ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդությունում:

14 նոյեմբերի

Հանրապետության վարչապետի պաշտոնակատարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց ՀՀ վարչապետի

պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին: Ողջունելով Նիկոլ Փաշինյանին՝ Վեհափառ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի



Նոյեմբերի 16-ին Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի հրավերով մեկնեց Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ քաղաք՝ հանդիսապետելու հայկական նորակառույց եկեղեցու օծման արարողությունը:

Այցի ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը, Վեհափառի գավազանակիր Ամանիա արք. Շատուրյանը, Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քհն. Մելիքյանը եւ ազգային բարերար տիար Գաբրիել Չեմբերյանը:

Քաղաքի «Տոյմաշովո» օդանավակայանում Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմավորեցին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ Նովոսիբիրսկի եւ Բերդսկի միտրոպոլիտ Տիխոնը, մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, նորակառույց եկեղեցու հոգեւոր հովիվ Գրիգոր քհն. Բեկնազարյանը եւ հայ համայնքի ղեկավար Կոլյա Կուլիշեանյանը, թեմի հոգեւոր դասի եւ Նովոսիբիրսկի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Տեղի ունեցավ ավանդական աղ ու հացի արարողություն, որից հետո Հայոց Ճայրապետն իր օրհնությունը բաշխեց ներկայից:

Նոյեմբերի 17-ի առավոտյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունն այցելեց մահաճապետարան, ուր հանդիպում ունեցավ Նովոսիբիրսկի մահաճապետ արք. Անդրեյ Տրավնիկովի հետ: Հանդիպմանը ներկա էր նաեւ Ռուսաստանի Դաշնությունում Ճայրատանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Վարդան Տողանյանը:

Նովոսիբիրսկի մահաճապետը ջերմությամբ ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Նովոսիբիրսկի մարզ՝ մշելով, որ այն պատմական իրադարձություն է մարզային կյանքում, ինչը մեծ խանդավառություն է առաջացրել մարզի հայկական բնակչության եւ քրիստոնեական այլ հարանվանությունների հետեւորդների շրջանում:

Պրն Տրավնիկովը Հայոց Յովվապետին ընդհանուր տեղեկություններ փոխանցեց մարզի վերաբերյալ՝ մասնավորապես անդրադառնալով մարզի հոգեւոր կյանքին, ազգային եւ կրոնական տարբեր համայնքների խաղաղ ու համերաշխ համակցության ապահովմանն ուղղված ծրագրերին: Խոսելով հայ համայնքի ներկայության եւ մարզի զարգացման գործում ունեցած դերակատարության մասին՝ մահաճապետն ուրախությամբ ընդգծեց, որ մարզի հայկական միակ եկեղեցու կառուցումը պիտի նպաստի հայության ազգային, հոգեւոր կյանքի առավել աշխուժացմանը: Պրն Անդրեյ Տրավնիկովը գոհունակությամբ մշեց համայնքի եւ պետական կառույցների միջեւ առկա գործակցության եւ սոցիալական ու մշակութային տարբեր ծրագրերում ակտիվ ներգրավվածության մասին:

Իր հերթին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շնորհակալություն հայտնելով Նովոսիբիրսկի մարզում ցուցաբերված ջերմ ընդունելության համար, ուրախություն հայտնեց այցելության կապակցությամբ՝ արձանագրելով, որ եկել է իր օրհնությունը բաշխելու եւ խնդակից դառնալու հայ համայնքի ուրախությանը՝ ազգային-եկեղեցական կյանքում կարեւոր իրադարձման՝ հայկական եկեղեցու օծման առիթով:

Այս առնչությամբ Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց մարզային եւ քաղաքային իշխանություններին՝ հայ համայնքի նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի եւ նրա ազգային-հոգեւոր կյանքի հանդեպ մշտական ուշադրության համար: Անդրադառնալով Ռուսիոյ երկրում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի երեքհարյուրամյա ներկայությանը՝ Հայոց Յովվապետն ընդգծեց, որ երկրում կայք հաստատած հայորդիները նվիրական պարտք են նկատել եկեղեցի եւ կրթական հաստատություններ հիմնել՝ պահպանելով իրենց ազգային ինքնությունը: Ըստ Ճայրապետի խոսքի՝ հայ ժողովրդի զավակներն աստվածսիրությունը նաեւ նույնականացրել են հայրենասիրության հետ՝ իրենց կարեւոր նպատակը բերելով իրենց հյուրընկալած Ռուսաստանի բարոր եւ պայծառ կյանքի կերտմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ փաստեց Ճայրաստանյայց Առաքելական Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա գործակցությունը՝ ի խնդիր երկու ժողովուրդների հոգեւոր կյանքի զորացման:

Հանդիպմանը խոսքով հանդես եկան նաեւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանը եւ ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Վարդան Տողանյանը՝ անդրադարձ կատարելով հավատակից երկու ժողովուրդների ընդհանրություններին եւ հայ-ռուսական բազմադարյան բարեկամությանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՉԵՄԱՍԲ ՕԾՎԵՑ ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿԻ ՆՈՐԱՎԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Նոյեմբերի 17-ին Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ քաղաքում, հանդիսապետությամբ Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ

Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հայկական նորակառույց եկեղեցու օծման արարողությունը: Առավոտյան Նորին Սրբությունը, ուղեկցությամբ Նովոսիբիրսկի մահաճապետ Անդրեյ Տրավնիկովի, Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի եւ հայրապետական շքախմբի անդամների, ժամանեց եկեղեցի, ուր ազգային տարազներով երիտասարդներ Ամենայն Հայոց Կաթողիկոսին մատուցեցին ավանդական աղ ու հացը: Այնուհետեւ եկեղեցու հոգեւոր հովիվ Գրիգոր քհն. Բեկնազարյանը ներկայացրեց դեռեւս 2008 թվականին հիմնադրված տաճարի կառուցման պատմությունը, քարոզչական-կրթական գործունեության իրականացման համար ստեղծված պայմանները:

Շարունակությունը՝ էջ 3



«Եկեղեցին փոփոխվող աշխարհում. մարտահրավերներ եւ հեռանկարներ» կոնֆերանսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Նոյեմբերի 23-ին, Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ «Եկեղեցին փոփոխվող աշխարհում. մարտահրավերներ եւ հեռանկարներ» խորագրով եռօրյա կոնֆերանսը՝ կազմակերպված «Դիալոգ» հասարա-

կական կազմակերպության գործակցությամբ: Գիտաժողովին մասնակից եկեղեցականներին եւ աշխարհականներին ողջունեց Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը:

Սրբազան հայրը ներկայիցին փոխանցեց

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունները՝ բարի ընթացք մաղթելով կոնֆերանսի աշխատանքներին:

Նաթան արքեպիսկոպոսն ընդգծեց, որ քննարկվելիք թեմաներն ու խնդիրները քրիստոնեության առաջին իսկ օրերից եղել են եւ մշտապես հուզել մարդ արարածին:

«Մեր օրերում եւս այդ խնդիրները համարում ենք շատ արդիական, որովհետեւ ընդհանուր աշխարհի մեջ քրիստոնեական արժեքների պահպանումն ավելի ու ավելի դժվար է դառնում:

Առաջին եւ ամենակարեւոր պայմանն այն է, որ քրիստոնեական բարոյականությունը կարող է կյանքի կոչվել եւ մեր ամենօրյա կյանքի մաս լինել միայն այն ժամանակ, երբ մենք այն ընդունում ենք ոչ թե իբրեւ օրենք, բարոյական մորմ կամ կանոն, այլ մեր քրիստոնեական հավատքի վրա հիմնված կենսակերպ: Մենք՝ բոլորս, առաջին հերթին, հենց սա պետք է ի մտի ունենանք. առանց հավատքի ուզածով քրիստոնեական արժեք վերածվում է տեսական մի օրենքի», - մշեց Նաթան սրբազանը՝ հորդորելով բոլոր մտորումների եւ քննարկումների մեջ առաջնայնությունը տալ հավատքին, որի միջո-

ցով միայն հնարավոր կլինի հասնել վերջնանպատակին:

Սրբազանը համաժողովի մասնակիցներին պատգամեց իրենց հավաքներում առաջնորդվել քրիստոնեական հավատքի զորությամբ, Սուրբ Հոգու քաջալերությամբ եւ Քրիստոսի պարգևած խաղաղությամբ:

Ներկաներին ողջունեց նաեւ «Դիալոգ» հասարակական կազմակերպության նախագահ Ալմաստ Մուրադյանը:

Այնուհետեւ հոգեւոր երգերի կատարմամբ հանդես եկավ Արագածոտնի թեմի Ապարանի Ս. Խաչ եկեղեցու երգչախումբը:

Եռօրյա կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին զեկույցներ՝ «Ժամանակակից աշխարհը եւ հակաքրիստոնեության դրսեւորումները», «Աշխարհիկացումը եւ բարոյականության հիմնախնդիրները 21-րդ դարում», «Քրիստոնեական արժեքների կրթական դերակրումը միջառնակային փոփոխությունների կառուցվածքում», «Բարոյականության արժեքները Հայ Առաքելական եկեղեցու դիրքորոշման կոնտեքստում», «Քրիստոնեական ընտանիքի մոդելը ժամանակակից հասարակության կառուցվածքում» եւ այլ թեմաներով:

այցը ՌԴ Նովոսիբիրսկի մարզ

Սկզբը՝ էջ 2

Եկեղեցու օծման արարողությանը ներկա էին Նովոսիբիրսկի նահանգապետը, Նովոսիբիրսկի քաղաքապետ Անատոլի Լոկոտը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ Նովոսիբիրսկի եւ Բերդսկի միտրոպոլիտ Տիխոնը, թեմի հոգեւոր սպասավորներ, քրիստոնեական եւ կրոնական այլ հարանվանությունների, մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ եւ մարզի տարբեր ծայրերից այս ուրախալի առիթով ժամանած բազում հայորդիներ:

Հոգեպարար արարողության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը, առընթերակցությամբ Եզրաս արք. Ներսիսյանի եւ Մուշեղ եպս. Բաբայանի, կատարեց եկեղեցու օծման արարողությունը՝ մորակառույց տաճարը կոչելով Սուրբ Աստվածածնի անունով:

Այնուհետեւ Հայոց Հայրապետն իր հայրական պատգամն ու օրհնությունը բերեց Նովոսի-

Հավատքն է մեր զորության աղբյուրը, հավատքով ենք մենք միաբան, հավատքով ենք մենք հաղթական: Արդարեւ, ամենար է ոչնչացնել մի ժողովրդի, որը կերտել է հոգեւոր հարուստ արժեքներ, մի ժողովրդի, որը չի վարանել երբեք իրեն զոհաբերել հանուն Աստծո եւ հայրենիքի: Մեր ժողովուրդը քրիստոնեական հավատքով լուսավորված իր լինելության ողջ ընթացքում ձգտել է իր կյանքը խարսխել Ավետարանի պատվիրանների վրա՝ իր շուրջը լողը լցնելով հոգեւոր արժեքներով, որոնք այսօր, անտարակույս, համամարդկային մշակույթի հարուստ ժառանգության մաս են կազմում:

Եշմարիտ է ասված՝ ով մոռանում է իր պատմությունը, զուրկ է ապագայից եւ անխուսափելիորեն դատապարտված է կորստյան: Այս գիտակցությամբ ռուսաստանաբնակ հավատավոր մեր զավակները կառուցեցին եկեղեցիներ, հաստատեցին դպրոցներ, միլիվեցին հոգեւոր



բիրսկի հայ համայնքի կյանքում կարեւոր այս տոնախմբության մասնակիցներին. «...Տոն է այսօր, քանզի բացվեցին Աստծո տան դռները, որտեղ մեր ժողովրդի զավակունք, Արարչի հետ հաղորդակցությամբ, Տիրոջն են ներկայացնելու իրենց աղոթքն ու խնդրանքները, իրենց գոհաբանությունը: Մեր ժողովուրդը հազարամյակների իր պատմության ընթացքում բազում փորձություններ ու դժվարություններ կրեց, վերապրեց Հայոց ցեղասպանությունը, հարություն առավ եւ հարատեւեց իբրեւ ստեղծագործ ժողովուրդ, որովհետեւ փարվեց իր եկեղեցուն, որը մշտապես խնամել, միավորել, ներշնչել եւ առաջնորդել է հայոց ազգին փրկության ճանապարհով:

կյանքի վերադարձությամբ, որպեսզի ամուր պահեն առ Աստված հավատը եւ իրենց զավակներին հաղորդ դարձնեն ազգային, հոգեւոր մեր դարավոր ամանց արժեքներին»:

Նորին Սրբությունը խոսեց Ռուսաստանում տարբեր ազգությունների եւ կրոնների, նրանց ավանդությունների ու սովորույթների հանդեպ տիրապետող հարգանքի մթնոլորտի մասին՝ անդրադառնալով այն իրողությանը, որ ռուսաստանաբնակ հայորդիները եւս իշխանությունների հոգածու ուշադրության շնորհիվ, նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու եղբայրական եւ ջերմ վերաբերմունքի պայմաններում հնարավորություն ունեն Ռուսաստանի եւ Նոր



Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների մոր նշանակումներ:

- Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Խաժակ արք. Պարսամյանը նշանակվել է Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ (նստավայրը՝ Հռոմ):
- Գեւորգ եպս Սարոյանը, ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատությունների վերա-

տեսչի պարտականություններից, ծառայության է կոչվել Արարատյան հայրապետական թեմում՝ առաջնորդական փոխանորդի իշխանության ներքո:

- Գրիգորիս աբղ. Շոխիկյանը, ազատվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակում ստանձնած պարտականություններից, կոչվել է ուսման Մեծ Բրիտանիայում:
- Գաբրիել քնն. Վարդանյանը, ազատվելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանի վերակացուի պարտականություններից, ծառայության է կոչվել հոգեւոր ճեմարանում՝ որպես փոխտեսչ՝ կարգապահական գծով:

Ծանուցում

Այսու տեղեկացնում ենք, որ Միածնաէջ Մայր տաճարի հիմնամորոգման եւ ամրակայման շինարարական աշխատանքների պատճառով տաճարը ժամանակավորապես փակ կլինի այցելությունների եւ արարողությունների համար:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը ժամերգություններին կմասնակցի «Ս. Հովհաննես

Սկրտիչ - Սուրբ Վարդան» մատուռ-մկրտարանում եւ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում, իսկ կիրակի օրերին միաբանությունը՝ գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Պատարագի արարողությանը կմասնակցի Ս. Գայանե վանքում:

Այս ընթացքում աղոթասացությունը Մայր տաճարում չի դադարելու. կմատուցվեն կիրակնօրյա Պատարագներ՝ մի քանի միաբանների մասնակցությամբ:

Տնօրինություն

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Լեւոնիայի հոգեւոր հովվությունը

ներառվում է Ուկրաինայի հայոց թեմի առաջանորդի հոգեւոր իրավասության ներքո:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆ (1809–1848)

ԱՐՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 4-9, 11-12, 15-21

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ՄՅՈՒՄ ԱՐՁԱԿ ԳՈՐԾԵՐԸ

Խ. Արովյանը հայ գրականություն է բերել ոչ միայն նոր գաղափարներ ու թեմաներ, նոր լեզու եւ ժանրեր, կերպավորման նոր սկզբունքներ, այլեւ ամենից կարեւորը՝ սերունդներին թողել է նրանց ճանապարհը լուսավորող գեղարվեստական մնայուն արժեքներ: Եվրոպական լուսավորական շարժմանը, գեղարվեստական, հասարակական ու մանկավարժական մտքի նվաճումներին քաջանմուռ խ. Արովյանը լեզվաբանական աշխատությունների («Նախաշավիղ կրթության հայկազյան լեզվի», «Քերականություն ռուսաց վասն հայոց»), ուղեգրությունների («Ճանապարհորդություն դեպի Անիի ավերակները»), ազգագրական ուսումնասիրությունների («Ակնարկ Թիֆլիսի հայոց հատկապես հարսանեկան ավանդությունների վրա», «Քրդեր եւ եզդիներ») հետ միասին՝ Դ. Դիդրոյի ուսուցողական գործերի հետետեւյալ մի վեպ է գրել՝ «Տիգրանի պատմությունը» խորագրով: Վերջին տարիներին գրած արձակ գործերի մեջ գեղարվեստական հետաքրքրություն են ներկայացնում «Առաջին սեր» եւ «Թուրքի աղջիկ» պատմվածքները, որոնք նա գրել է 1844-47 թթ. ընթացքում: Արանցից առաջինը իր ֆաբուլայով որոշ հարազատություն ունի «Վերջ Դայաստանի» վեպին՝ նախքան ռուս-պարսկական պատերազմը հայության «հալը» եւ Երեւանի բերդի սարսափները պատկերելու իմաստով: Պատմվածքի գործողությունը ներկայացվում է հեղինակի ծրագրով. նախ պատկերվում է Երեւանի բերդը, անհույս վիճակում այդ բերդին նայող ջրենդեհի (ջրի այն կողմից) ռես Կարոյի որդի Վանին, ապա ներկայացվում են նախընթաց դեպքերը: Վարդավառի տոնին Վանին շատերի հետ ուխտի է գնում Արայի լեռան լանջին գտնվող Ծաղկեվանք: Ուխտագնացության նախապատրաստությունը մի ցմբակաւ արարողություն է, որի շքեղությանը հետին աղբատն էլ ներդնում է իր բոլոր կարողությունները, որովհետեւ մուրազ ու նպատակ ունի՝ կապված Ս. Դով-հանենսի քարայր մատուռի հետ: Վանին էլ գնալու ճանապարհին ծանոթանում ու սիրահարվում է Փարիխան անունով մի որբ աղջկա, որ ուխտի էր գնում Ծերունի հարազատի՝ պապի հետ: Թվում



էր՝ ուխտագնացությունը երջանկություն էր բերելու հենց ճանապարհին նշանված զույգին, սակայն հետդարձի ճանապարհին զինված ավազակախումբն առեւանգում է Փարիխանին եւ նվեր տանում Երեւանի բերդ՝ սարդար Դուսեյին խանին: Ահա ինչու էր Վանին մորմուռում՝ անմխիթար նայելով Երեւանի բերդին, ուր տանջանքների մեջ էր իր սիրելին:

Պատմվածքը սիրո եւ ազատության, սիրո հարցում բռնության ու կոպիտ ուժի, դասային խտրականության մերժման գաղափարների հուզական արծարծումների հետ միասին աչքի է ընկնում մի շարք այլ արժանիքներով: Ժողովրդական տոնախմբության սքանչելի պատկերմանը զուգահեռ՝ Արովյանը Բաֆֆուց տասնամյակներ առաջ ստեղծել է «Դայաստանի սրտի»՝ Արարատյան

դաշտի գեղանկարչական հրաշալի պատկեր՝ համեմելով հայոց պատմությունից նրան առնչվող դրվագների, երեւելի պատմական գործիչների սխրանքների հիշողությամբ, որը պատմվածքին տալիս է նաեւ պատմաճանաչողական նշանակություն:

Մարդու բնական ազատության խնդիրն է Խ. Արովյանն արձարծել «Թուրքի աղջիկը» պատմվածքում: Նա մերժում է մարդկանց միմյանցից տարանջատող կրոնական խտրականությունը, հենց դրա համար էլ պատմվածքն ունի «Զորություն կրոնի» կողմնորոշիչ ենթավերնագիրը: Բնությունից մարդը ծնվում է ազատ, սակայն նրա ազատությունը հասարակության մեջ կաշկանդվում է ազգային հարաբերությունների, կրոնական տարբերությունների եւ սոցիալական կյանքի այլեւայլ պարտադրանքներով: Նա դեմ է մարդու ազատ հոգին կաշկանդող բոլոր անջրպետներին, առավել եւս՝ կրոնական մղեւանդությամբ քարոզվող ազգամիջյան թշնամանքին: Բայց չէ՞ որ մարդկությունը կարող էր ազատ լինել այդ չարիքից՝ գիտակցված մարդասիրության շնորհիվ: Ուրեմն՝ երանելի էին այն ժամանակները, երբ մարդկային հոգին ազատ է եղել բռնության ամեն տեսակի շղթաներից: Կրոնական տարբերություններն իրար հարեւանությամբ ապրող, նույն ջուրը խմող, նույն օդը շնչող մարդկանց թշնամալու պատճառ չպիտի լինեն: «Այ պատկերակից հողածին, հավատներս տարբեր ա, բայց սրտներս մեկ ա», - գրել է նա:

Խ. Արովյանը համահայկական ու համազգային երետույթ է, նա ոգի է, ուղի եւ ընթացք: Դայ նոր ու նորագույն գրականության զարգացման վրա հսկայական ազդեցություն է ունեցել նա հատկապես իր «Վերջ Դայաստանի» վեպով: Նա ստեղծել է գրական մի հզոր դպրոց, որի թե՛ արեւելահայ, թե՛ արեւմտահայ հետետորդները արվանական սկզբունքներով են առաջնորդվել հայ կյանքը պատկերելիս: Ընդ որում՝ նրա գեղարվեստական սխրանքը գնահատել եւ նրա պատգամներով առաջնորդվել են գրական տարբեր ուղղություններ դավանող ռեալիստ ու ռոմանտիկ գրողները թե՛ արեւելահայ եւ թե՛ արեւմտահայ իրականություններում: Անհնար է առանց Արովյանի երեւակայել ինչպես Բաֆֆու, Պատկանյանի, Փափազյանի, Սիւսանթոյի, Վարուժանի, Զարեմցի եւ Զիրագի ռոմանտիկական պոթկումները, այնպես էլ Պռոշյանի, Աղայանի, Մուրացյանի, Թումանյանի, Զարդարյանի, Դեմիրճյանի, Բակունցի, Զորյանի, Մաթեւոսյանի՝ գյուղական իրականությունը պատկերող հրաշակերտությունները:

Խ. Արովյանի ստեղծագործությունն ու նրա լուսավոր կերպարը դարձել են ոչ միայն գիտական ուսումնասիրությունների, այլեւ արձակագիրների, բանաստեղծների, գեղանկարիչների ու քանդակագործների ոգեշնչման աղբյուր:

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Վիեննայում նեվեց Սբ Հռիփսիմե եկեղեցու օծման 50-ամյակը



Վիեննայի Սբ Հռիփսիմե հայ առաքելական եկեղեցու օծման 50-ամյակի առիթով նոյեմբերի 16-18-ը Ավստրիայի մայրաքաղաքում տեղի ունեցան եռօրյա հանդիսավոր միջոցառումներ: Սբ Հռիփսիմե եկեղեցու օծումը տեղի էր ունեցել 1968-ին՝ ձեռնաք. Ն. Ս. Օ. Տ. Ս. Վազգեն Ա Ամենայն Դայոց Կաթողիկոսի: Արարողությունները հանդիսապետելու համար, տեղի եկեղեցական վարչության հրավերով եւ Վեհափառ Դայրապետի օրհնությամբ, Դայաստանից ժամանել էր Երեւանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան եւ Երեւանի Սբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան եպս ժամկոչյանը: Հորեյանական միջոցառումներին ներկա գտնվեցին Ավստրիայի Հանրապետությունում ԳԳ արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանը, Ավստրիայում Վատիկանի դեսպան եւ պապական նվիրակ Պետեր արք. Յուրբերգեն, Վատիկանում Ավստրիայի դեսպան եւ Ավստրիայի «Պռո Օրինետ» Էկունենիկ կազմակերպության նախագահ Ալֆոնս Քրուսը, Ավստրիա-Հայաստան խորհրդարանական բարեկամական խմբի նախագահ տիկ. Գուրոն Քուզլերը, Ավստրիայի կանցլերի կրոնական հարցերով հատուկ ներկայացուցիչ Դանիել Սուդեկը, Վիեննայի պետական համալսարանի դասախոսներ, քույր եկեղեցիների հոգեւոր եւ աշխարհիկ ներկայացուցիչներ, Ավստրիայում գործող հայկական ազգային հաստատությունների դեկավարներ ու ներկայացուցիչներ, Ավստրիայի հայ համայնքի անդամներ:

Սբ Հռիփսիմե եկեղեցու 50-ամյակի առթիվ պատրաստվել էր փաստավավերագրական մի ֆիլմ, որը հանձնվեց ներկաների ուշադրությանը, եւ որում ներկայացվում էր եկեղեցի կառուցելու մտահղացման, դրա կառուցման եւ օծման պատմությունը:

Միջոցառումների ժամանակ խոսքով հանդես եկան Կենտ-

րոնական Եվրոպայի եւ Սկանդինավիայի հայրապետական պատվիրակ Տիրան վրդ. Պետրոսյանը, Ավստրիայում ԳԳ արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Կիրակոսյանը, Ավստրիայի հայ առաքելական եկեղեցական համայնքի վարչության ատենապետ Վահագն Ամիրջանյանը եւ ուրիշներ: Դայր Տիրանը, շնորհավորելով Ավստրիայի հայ համայնքի անդամներին՝ այս գեղեցիկ հորեյանի առիթով, իր խոսքում մասնավորապես նշեց. «Այս օրերի տոնակատարությունների շարքը մեզ առաջին հերթին հիշեցնում է այդ վայրի խորհրդանշանականության մասին: Վիեննայի Սբ Հռիփսիմե եկեղեցին ամեն օր ավելի ու ավելի փոփոխվող աշխարհում վառ է պահում մեր համայնքի ոգին եւ ինքնությունը, ոգեկոչում մայր հայրենիքի հետ մեր հոգեւոր խոր կապը: Այս օրերին մենք նշում ենք ոչ միայն մեզ համար հարազատ տուն դարձած եկեղեցու 50-ամյակը, այլեւ Ավստրիայում հայ համայնքի շարունակականությունը»: Նա նաեւ շնորհակալության ու գնահատանքի խոսքն ուղղեց Սբ Հռիփսիմե եկեղեցու անցյալի ու ներկայի հոգեւոր սպասավորներին, եկեղեցական վարչության նախկին եւ ներկա անդամներին, համայնքի բոլոր հավատացյալներին, որոնք անձնվիրաբար իրենց մասնակցությունն են բերել եւ այսօր էլ շարունակում են բերել եկեղեցու պահպանությանն ու շենացմանը:

Նոյեմբերի 18-ին՝ կիրակի օրը, մատուցվեց սբ Պատարագ: Պատարագիչ Անուշավան եպս ժամկոչյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց: Սրբազան հայրն Ավստրիայի հայ հոգեւոր դասին, վարչության անդամներին ու հավատացյալ հայորդիներին փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Ս. Գարեգին Բ Ամենայն Դայոց Կաթողիկոսի հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները:

Վերստին շնորհավորելով համայնքի անդամներին՝ սրբազան հայրն ընդգծեց Սբ Հռիփսիմե եկեղեցու առանձնահատուկ դերն Ավստրիայի հայ համայնքի կայացման, ազգային ու հոգեւոր արժեքների պահպանման գործում: «Հաստատվեց Տիրոջ տունը, եւ այն դարձավ ձեր միասնականության, միակամության, միության անքակտելի խորհրդանշանն ու կնիքը: Այս է ձեր տունը, այստեղ եք զգում Աստծո հայրական սերն ու օգնականությունը ձեզ, այստեղ են մեծանում ձեր զավակները՝ ժառանգելով իրենց ծնողների հավատքն ու մշակույթը, միսուն ու կացը եւ ամենայն ինչ, որ կոչվում է հայկականություն», - մասնավորապես ասվում էր քարոզում: Խոսքի վերջում սրբազան հայրը նորանոր հաջողություններն ու առաջընթաց մաղթեց համայնքի անդամներին, կոչ արեց համախմբված զորացնել համայնական կյանքը՝ այն դարձնելով մի դարբնոց՝ սերունդներ դաստիարակելու, մայր եկեղեցուն եւ մայր հայրենիքին հավատավոր ու նվիրյալ զավակներ պարգետելու համար:

Պատարագի ավարտին, ձեռնաք Անուշավան սրբազանի, կատարվեց Սբ Աստվածածին եւ Սբ Հռիփսիմե սրբապատկերների օծման կարգը, որոնք եկեղեցուն էին նվիրաբերվել համայնքի անդամների ազնիվ նվիրատվությամբ:

Սբ Հռիփսիմե եկեղեցու օծման 50-ամյակի հանդիսավոր միջոցառումներն ուղեկցվեցին նաեւ հյուրասիրությամբ, հայ ազգային ու հոգեւոր երգերի կատարումներով:

Անսահման աղանդավոր ու անսահման հայրենասեր ՈՒՇԿԵՆԻ ԻՍՐԱԵԼՅԱՆ — I | O



Սկիզբը՝ թիվ 21

Իսրայելյանն օժտված էր իր յուրաքանչյուր կառույցի տեղն անվրեպ ընտրելու, շինությունն ու բնության տվյալ հատվածը ներդաշնակելու եւ ամբողջացնելու առանձնահատուկ շնորհով: Ճարտարապետի բոլոր կառույցները բացառիկ ներդաշնակությամբ ծուլված են միջավայրին՝ թե՛ լանդշաֆտին եւ թե՛ քաղաքային միջավայրին: Նրա բազում շինություններում հորինվածքային տեսանկյունից գերիշխող է բնությունը՝ սարը, գետը...

Այս հարցի հետ կապված՝ քանդակագործ կառ Դարությունյանը գրել է. «Ռաֆոն վարպետորեն էր ընտրում կառույցի տեղը լանդշաֆտում: Շարունակ մտաբերում էր մեր եկեղեցիների դիրքը, որոնք եւ ենթարկվում են բնությանը, եւ հարստացնում նրան»:

Ինքը՝ մեծ ճարտարապետը եւս խոսել է նշված խնդրի մասին՝ «Գարուն» ամսագրին տված հարցազրույցում ասելով. «Մշտապես պետք է հաշվի առնել բնության թելադրանքն ու անխոս պահանջը: Արհեստականորեն կարելի է ազդել բնության վրա՝ գեղեցիկի սահմաններում, բայց չի կարելի եւ նույնիսկ հանցանք է արհեստականորեն բնության այլանդակումը, խուզումը եւ տարախոխումը: Բնության յուրաքանչյուր հատվածին դիպելուց առաջ պետք է ստեղծագործական մոտեցում ունենալ եւ ինչ-որ տեղ ենթարկվել նրան: Երեւանի մոտ գտնվող «Դալի բաղերը», որն ավելի քան 2000 տարվա պատմություն ունի, ավերում ենք, որովհետեւ քաղաքն ընդլայնվում է, եւ տարածության պակաս է զգացվում:

Շարունակությունը՝ էջ 6

ՉԱՐԵՆՑՆ ԻՐ ՄԱՀՎԱՆ ԿՈԱՂՈՒՄՆԵՐՈՒՄ



Սկիզբը՝ թիվ 20-21

Հերթական «Մահվան տեսիլ»-ը կարող էր լինել «Ամվեր-նագիր» (15. XII. 1936) բանաստեղծությունը, որն սկսվում է «Իմ մահվան օրը կիջնի լռություն, // Ծանր կնասի քաղաքի վրա...» տողերով:

Դրանից մեկ ամիս առաջ (16.XI. 1936) Չարենցը ենթարկվել էր սպանիչ մի հարցաքննության (Չարենցի 1935-1937 թթ. դատական-հետաքննական գործերը, հարցաքննություններով հանդերձ, տես «Նորահայտ էջեր», էջ 343-379): Այդ օրերին (19. XI. 1936) գրել է մաե կտակի նշանակություն ունեցող իր «Ազգ»-ը, որի մեջ հանձնարարում էր՝ ինչ գնով էլ լինի, անգամ իր կալանքի դեպքում «սույն գրու-

թյունները» չոչնչացնել: Հիմա հնարավոր չէ ասել, թե «սույն գրություններ» ասելով՝ Չարենցն ինչ նկատի ուներ:

Ահա այդ գրությունն ամբողջությամբ. «Եթե որեւէ բերումով սույն գրություններն ընկնեն հանկարծ մեկի ձեռք՝ պահել խնամքով եւ միայն իմ մահից հետո հանձնել մեր թանգարանին: Ոչ մի դեպքում չոչնչացնել: Լավ է հանձնել ուր լինի՝ անգամ իմ կյանքի օրով, իմանալով, որ սրանք ինձ կկալանեն - քան չոչնչացնել» (ԳՄ, էջ 230):

Ամենայն հավանականությամբ գեղարվեստական էջեր չեն, այլ հենց գրություններ, եւ բացառված չէ, որ դրանք դեռ լույս աշխարհի գան էմիյան թաքստոցից:

Մի խոսքով՝ «Ամվերնագիր»-ը գրելիս Չարենցը գտնվում էր հոգեբանական ծանրածանր ապրումների մեջ: Ասես իր կարապի երգը լինի: Եղբերե՛րգ է, որ համարժեք է հերոսական համանվագի: Խոնարհենք բոլոր դրոշները եւ հայտարարենք լռության լուր՝ կյանքից հեռանում է հերոսը: Բանաստեղծությունը (61 տող) միանվագ ողբ է, բայց բարձր արժանապատվության ողբ, որովհետեւ այդպես հեռանում է միմիայն իր արժեքի բարձր ու ճիշտ գիտակցությունն ունեցող մեծությունը: Այդպես պատերազմի դաշտում զոհված հրամանատարին են փողային նվագախմբով եւ ինքնաձիգի համագարկերով ծանապարհ դնում:

Այդպես պոետներն են տեսնում իրենց մահը, որովհետեւ իրենց շահած հոգեւոր պատերազմը ոչ ոք չի տեսնում, ով էլ տեսնում է, չի արտահայտվում, իսկ նրան, ով տեսնում է ու պիտի արտահայտվի, լռեցնում են:

Այս բանաստեղծությամբ Չարենցն իրեն վերջնական հրաժեշտ տվեց.

*Այն, որ ես էի, որ իմն էր առաջ,
Արդեն չի հառնի եւ ոչ մի գրքում,
Եվ ո՛չ մի գրքում՝ աշխարհում գրած,
Եվ ո՛չ մի գրքում, եւ ո՛չ մի գրքում...
(ԱԶԵ, էջ 202)*

Մահվան շրջանակը սեղմվում էր: Չարենցն ասես լինեք գրական վտարակ, նրան ոչ թե մոռացել էին, այլ դուրս էին

նետել գրական կյանքից: Նրանով արդեն զբաղվում էին մի-միայն ՆԳԺԿ-ի գործակալները:

1937-ի ապրիլին հայ գրողների ընդհանուր ժողովում, որը մահվան նախապատրաստության միտ էր, Վալերի Կիրպոտինը նրան հայտարարեց օտար-թշմաղի. «Չարենցի ձեռքը բռնեց թշմաղին»:

Դետո՞ մայիսին, Չարենցի «Բաց մամակ»-ներն էին ՀԿ(Բ) Կ Կենտկոմի առաջին քարտուղար եւ արդեն իսկ Չարենցի անձնական թշմաղի Ամատունում, որոնց մեջ փորձում էր արդարանալ իր չգործած մեղքերի համար, բայց ապարդյուն (տես ՆԷ, էջ 280-289, 539-547, 547-562, ԳՄ, 239-243):

Հաջորդում են 1937-ի հուլիսին ընտանիքի վտարումը Ծաղկաձորի գրողների տնից եւ ձերբակալությունը հուլիսի 27-ին: Չարենցին մեղադրում էին այնպիսի հողվածներով, որոնք գնդակահարություն էին գուժում:

Մահն ընկել էր նրա ետեւից:

Բանտում էր, երբ, որպես ժողովրդի թշնամու կին, ձերբակալեցին մաե կնոջը: Բանտում էլ կնքեց մահկանացուն՝ բոլորից լքված, միայնակ եւ հոգեբանորեն ու ֆիզիկապես ջախջախված:

Այս ամենը մանրամասնելու դեպքում՝ ստիպված պիտի լինեի գրել մի ամբողջ գիրք, որի տարբեր հատվածներ արդեն իսկ գրված ու փաստարկված են մեր մախորդ գրքերում եւ մեր կազմած հատորներում՝ «Ողբերգական Չարենցը» (1990), «Փակ դռների գաղտնիքը» (1994), «Եղիշե Չարենց: Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը» (1996), «Նորահայտ էջեր» (1996), «Չարենցյան ասույթներ» (1997, Բեյրութ), «Չարենցի հետ» (հուլիսի գիրք 1, 2, 1997, 2008), «Գիրք մնացորդաց» (2012, 2017):

Մահն այլեւ «Երջանիկ առասպել» չէր նրա համար, այլ գերեզմանի (թաղման) տեղն անգամ անհայտության մատնած մի ողբերգություն:

Կյանքին հրաժեշտ տվեց ծանր տանջանքների մեջ, կինն աքտորվեց, երեխաները որբացան, գրական ընկերները գնդակահարվեցին կամ աքտորվեցին, գրքերը հանվեցին գրադարաններից, բանբասանք-չարախոսությունները շատացան, ձեռագրերը ցաքուցրիվ եղան կամ թաղվեցին հողի տակ, որպեսզի հետո՝ արդեն 1954-ին, հարություն առնեն իր անվան հետ մեկտեղ:

Չարենցը տեսավ եւ ապրեց իր իրական մահը... Իսկ իր անմահության մասին գիտեւ եւ մեկ անգամ չէ, որ գրել էր...

Դավիթ ԳԱՄԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԲԱՌԱՍՏԵՂԾ ՏԵՐՅԱՆԸ

Տերյանի ոճը պայմանավորող հատկանիշներից մեկը, անշուշտ, բանաստեղծի լեզվամտածողության ինքնատիպությունն է, որն առավել ցայտուն դրսևորվել է բանաստեղծան ասպարեզում: Բանաստեղծը նոր գրականության բարեփոխիչը եղավ, սկզբունքորեն նոր ձեւով լուծեց մաե չափածո խոսքին անհրաժեշտ բառապաշարի հարցը: Այս իրողությունը, ինչպես մաե Տերյանի անկրկնելի արվեստն արդեն կարեւորում են նրա խոսքարվեստի գլխավոր առանձնահատկություններից մեկի՝ հեղինակային նորակազմությունների քննությունը՝ տերյանական լեզվի նորարարության, բանաստեղծի կերտած գեղարվեստական պատկերի ավելի հանգամանալի ուսումնասիրության առումով:

Հեղինակային նորակազմությունները (անհատական նորաբանություններ) ոճական իրակություն են: Ի տարբերություն լեզվական նորաբանությունների՝ հեղինակային նորակազմությունները ոչ թե նոր երեւան եկած առարկաների, երեւոյթների անվանումներ են, այլ հասկացությունը, երեւոյթը նոր ձեւով արտահայտող լեզվամիջոցներ: Դրանց ստեղծման գործում գլխավոր դերը կատարում են ոճական շարժառիթները՝ խոսքի սեղմության ձգտումը, իրողության նորովի մեկնաբանման հակումը եւ այլն: Հեղինակային նորակազմություններն այնպիսի բառեր են, որոնք ստեղծում է ինքը՝ գեղարվեստագետը, բանաստեղծը, գրողը, ոչ թե նրա համար, որ դրանց տա հանրընդհանուր գործածություն, այլ նրա համար, որ ընթերցողը գեղարվեստական ստեղծագործության ընկալման գործում զգա, թե ինչպես է ստեղծվում նոր բառը: «Նորաբանությունը պետք է միշտ ընդունվի որպես տվյալ գրողի ինչ-որ հայտնագործություն»,- գրում է Բ. Տոմաշևսկին (Б. Томашевский, Стилистика и стихосложение, Л., 1959, էջ 4):

Նորակազմ բառերը բանաստեղծին հնարավորություն են տալիս խուսափելու անընդհատ շրջանաձուլող բառերի եւ կապակցությունների հաճախակի պտոծածություններից՝ նպաստելով մաե խոսքի հուզարտահայտչական հնարավորությունների ընդլայնմանը: Նշենք մաե, որ դժվար է միանշանակ ճշգրտությամբ որոշել ինչպես Տերյանի, այնպես էլ որեւէ այլ գրողի հեղինակային նորակազմությունները. նոր բառերի հեղինակային պատկանելության մասին կարող ենք խոսել միայն որոշ վերապահությամբ: Այս մասին Ս. Էլոյանը գրում է. «Հեղինակային նորաբանությունների ստույգ որոշման խնդիրը հղի է թյուրիմացություններով եւ սխալներով, քանի դեռ չունենք բոլոր գրողների ու բանաստեղծների բառարանները» (Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989, էջ 224): Ուստի Տերյանի չափածոյից քաղված նորաբանությունների վերաբերյալ մեր բոլոր դիտարկումները սահմանափակվում են այն բառազանձի շրջանակներով, որն ընդգրկված է արդի հայերենի բացատրական բառարաններում: Նման մոտեցմամբ հեղինակային նորակազմություն ենք համարել բոլոր այն բառերը, որոնք՝

ա) Չկան Ս. Մախաթյանցի Հայերեն բացատրական, Ե. Աղայանի Արդի հայերենի բացատրական, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարաններում, ինչպես օրինակ՝ «դժմափայլ» (Անտիպ էջեր, II, 30), «հուրվարդ» (Ոսկե շղթա, I, 215), «հուշերգ» (Անտիպ էջեր, II, 20), «նրբագին» (Անտիպ էջեր, II, 41) (Վ. Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. I, հ. II, Ե., 1960, 1961):

բ) Չկան Հայերենի բացատրական բառարանում, իսկ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական եւ Արդի հայերենի բացատրական բառարաններում տրված

են միայն Տերյանի չափածոյից քաղված օրինակներով կամ այն իմաստի բացատրությամբ, որով գործածել է բանաստեղծն իր ստեղծագործություններում: Որոշ նորաբանություններ բառարաններում տրված են «նրբ.» (նորաբանություն), «հզվդ.» (հազվադեպ) կամ «բմստ.» (բանաստեղծական) նշումներով: Այդպիսիք են հետեւյալ նորաբանությունները՝ «ախասաստ» (Երկիր Նաիրի, I, 241), «աղմկահեր» (Մթնշաղի անուրջներ, I, 36), «աղմկահյուս» (Վերադարձ, I, 210), «ամենօրոր» (Անտիպ էջեր, II, 15), «առազաստաբաց» (Սեւագրություններ, II, 166), «աստեղաշող» (Այլ բանաստեղծություններ, I, 268), «աստղացանց» (Մթնշաղի անուրջներ, I, 100), «արծաթաճոճ» (Մթնշաղի անուրջներ, I, 100), «զվարթակարկաչ» (Մթնշաղի անուրջներ, I, 73), «լեռնադուստր» (Երկիր Նաիրի, I, 252), «հեռածավալ» (Մթնշաղի անուրջներ, I, 30), «հեռանիստ» (Մթնշաղի անուրջներ, I, 97), «հրահրուն» (Ոսկե շղթա, I, 225), «հրավարդ» (Ոսկե շղթա, I, 224), «հրդեհավառ» (Մթնշաղի անուրջներ, I, 85), «միգասքող» (Անտիպ էջեր, II, 15), «մոլորաշրջիկ» (Մթնշաղի անուրջներ, I, 81), «նրբակապույտ» (Այլ բանաստեղծություններ, I, 277), «նրբահյուս» (Մթնշաղի անուրջներ, I, 30), «ոսկելուսիկ» (Անտիպ էջեր, II, 37), «սառնաթեւ» (Այլ բանաստեղծություններ, I, 264), «սովերապաճույճ» (Մթնշաղի անուրջներ, I, 73), «սուրսայր» (Երկիր Նաիրի, I, 250), «տխարբոց» (Ոսկի հեքիաթ, I, 195), «տխարադալուկ» (Մթնշաղի անուրջներ, I, 69), «տխուրաչյա» (Մթնշաղի անուրջներ, I, 252), «քնքշաբույր» (Մթնշաղի անուրջներ, I, 102), «քնքշաբույր» (Մթնշաղի անուրջներ, I, 100), «օրերեզ» (Գիշեր եւ հուշեր, I, 115) եւ այլն:

գ) Չկան Հայերեն բացատրական բառարանում, Արդի հայերենի բացատրական բառարանում, իսկ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում տրված են Տերյանի չափածոյից քաղված օրինակներով, ինչպես՝ «ամփոփիկ» (Մթնշաղի անուրջներ, I, 98), «ամօրոր» (Ոսկե շղթա, I, 217), «արյունաբորբ» (Անտիպ էջեր, II, 123), «արմանման» (Ոսկե շղթա, I, 218), «արմառուն» (Սեւագրություններ, II, 193), «սրնգանուշ» (Անտիպ էջեր, II, 85): «Արմանման»



Տերյանի դիմանկարը, գործ՝ Վրույր Գալստյանի

բառը մյուս բառարաններում ամրագրված է «արյունաման» ձեւով: Տերյանի անտիպ էջերում գործածված «սրնգանուշ» բառը բանաստեղծի երկերի վերջին ժողովածուներում փոխարինվել է «սրնգանուշ»-ով: Կարծում ենք՝ պետք է հարգել բանաստեղծի նախընտրությունը եւ ստեղծագործություններում պահպանել «սրնգանուշ» ձեւը: Նույնը վերաբերում է մաե «ձյունաքնքուշ», «քնքշաշրջուն» բառերին:

դ) Նույնությամբ կան միայն Արդի հայերենի բացատրական բառարանում եւ տրված են իմաստային այն նրբերանգի բացատրությամբ, որով Տերյանը գործածել է իր բանաստեղծություններում: Որոշ բառեր ունեն «հզվդ.», «նրբ.» կամ «բմստ.» նշումները: Ահա օրինակներ՝ «ձյունապայծառ» (Այլ բանաստեղծություններ, I, 278), «ձյունաքնքուշ» (Անտիպ էջեր, II, 85), «քնքշաշրջուն» (Անտիպ էջեր, II, 15):

Ժամանակակից գրական հայերենում հեղինակային նորակազմություններն ստեղծվում են լեզվում առկա բառերի ու արմատների օգտագործումով:

Շարունակությունը՝ էջ 8

Արթուր Ադամովի «Պիեսներն» ու նրա թարգմանությունը



Ռաճատուրգ, վիպագիր, բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, լրագրող Արթուր Ադամովը, որն իր ամբողջ կյանքի ընթացքում տենչացել է ինքնասպան լինել, որն ունեցել է դառն ճակատագիր, մեկն է այն հայտնի դեմքերից՝ Եվգեն Իոնեսկո, Սեմյոն Բեքբեթ, Ժան Ժենե, որոնք հետպատերազմյան Եվրոպայում 1950-ական թվականներին հիմնեցին աբսուրդի թատրոնի ուղղությունը եւ գրեցին վիճահարույց, բայց եւ ուշագրավ ու մնայուն մի շարք պիեսներ։ Այդ խմբից Ս. Բեքբեթն արժանացավ Նոբելյան մրցանակի, Է. Իոնեսկոն՝ Ֆրանսիայի ակադեմիայի անդամի պատվավոր կոչման։ Ճակատագրի հեգնանքով՝ մյուս երկուսը հայտնվեցին երկրորդ դերում։

Եվ ահա, ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ, արվեստագետ ու թարգմանչուհի Սաթե (Սաթենիկ) Խաչատրյանի թարգմանությամբ առաջին անգամ հայ ընթերցողին ֆրանսերեն բնագրից ներկայացվել է հայագիր Ա. Ադամովի ավելի քան քսան պիեսներից վեցը (տե՛ս Ադամով Ա., «Պիեսներ», Եր., 2017, «Ձանգակ» հրատարակչություն)։

Ինչ խոսք, մեզ համար բարեբախտություն կլինի, եթե Ադամովն իր գործերը գրած լիներ հայերեն՝ դրանով իսկ նպաստելով հայ իրականության մեջ աբսուրդի գրական ուղղության զարգացմանը։ Բայց այդ դեպքում, ցավոք, նա չէր ունենա այն համբավը, որ ունի ֆրանսիական

եւ համաշխարհային գրականության մեջ։ Իհարկե, Ադամովին հետաքրքրող եղել է ընդհանրապես աշխարհի խեղճածության վերհանումը, հետեւաբար այդ գրականության մեջ բացակայելու էին հայեցին եւ հայ մարդը...

Այդուհանդերձ՝ Արթուր Ադամովը մոր անուն չէ մեր գրական ու մշակութային կյանքում։ Կիսամոռացված։ Թերեւս։ Նա այն քչերից մեկն էր, որն անցյալ դարի 30-40-ական թվականներին պաշտպան կանգնեց Շահան Շահնուրին, երբ վերջինս եմթարկվում էր հանրապետի ու անմախաղեպ բնադատությունների։ Նա Շահնուրին համարեց հայ «արձակի վարպետներն» մեկը եւ «մեծարժեք հեղինակ», «հազվագիտներն մին» (տե՛ս «Ձարթոնք», Բեյրութ, 1949, սեպտ. 23)։

Սկիզբահայ գրողները (մույնը կարելի է ասել մեր օտարագիրների մասին), եթե չհաշվենք Արթուր Ադամովին, դրամատուրգիական մնայուն գործեր չստեղծեցին։ Վերապահումով, թերեւս, կարելի է հիշատակել Համաստեղի «Հայաստանի լեռներու սրնգահարը», Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» դրամաները, որոնցից առաջինը խոցելի է՝ արվեստի առումով, երկրորդը՝ լեզվի (մեզ համար, քանի որ հայերեն չի գրվել)։ Եվ ահա ինչ-որ ժամանակ հայերեն խոսող եւ դեպքերի բերումով մայրենին մոռացած Ադամովն առաջին անգամ մեզ է ներկայացնում թարգմանաբար։ Սա ասես յուրատեսակ մի հայրենադարձություն է, որը շատ հարիր է մեր օրերին։

Լինելով 20-րդ դարի երկրորդ տասնամյակից ձեւավորված սյուռռեալիստական շարժման ինքնատիպ շարունակությունը՝ աբսուրդի թատրոնը եղավ արտահայտություն մտածելի կյանքի անհեթեթության, իրականության մեջ տեղի ունեցող անորոշ,

անիմաստ ու անտրամաբանական խոսքի, գործի ու արարքների, որոնք հաճախ հասնում են զավեշտների, եւ որոնց գլխավոր նպատակը «ընդունված» կյանքի միտումնավոր քանդումն է, հանդիսատեսի մեջ անհանգստության առթումը։ Այս ուղղության գործերում (մեզանում թարգմանված է ընդամենը մեկ-երկու պիես (տե՛ս Իոնեսկո Է., «Արքան մեռնում է», Եր., 1994, Բեքբեթ Ս., «Գողոթին սպասելիս», Եր., 2010) արտառնոց են ոչ միայն բուն տեքստերը, պատկերվող իրադարձությունները, այլեւ շատ հերոսների անունները՝ Տրամաբան (Է. Իոնեսկո, «Ունգեղջյուրը»), Տղա (Ս. Բեքբեթ, «Գողոթին սպասելիս»), Փարիզյան Կոմունա (Ա. Ադամով, «71-ի գարունը»), բեմում գործող մարդիկ, որոնք արտաքինապես եւս աչքի զարնող են՝ կեղտոտ կոշիկներով, չսանրված, քրքրված հագուստներով, ճմռված գլխարկներով... մարդիկ, որ միմյանց հետ խոսում են արտահայտման կաղապարներով, առանց պատճառի կովում են ու հաշտվում։ Բեմի վրա այլափոխվում են ոչ միայն դերերով ու պաշտոններով (Ադամովի «Եթե ամառը վերադառնար»), այլեւ կարող են վերածվել որեւէ կենդանու (Իոնեսկոյի «Ունգեղջյուրը»)։

Արթուր Ադամովը, լինելով աբսուրդի թատրոնի հիմնադիրներից մեկը, բնականաբար իր գործերում պիտի արտահայտեր այս ուղղությանը բնորոշ մի շարք հատկանիշներ։ Նրա տխուր մանկությունը, հասուն տարիների գրկանքները, ընտանեկան ողբերգությունը (հոր ինքնասպանությունը), քաղաքական կողմնորոշումների հակասականությունները որքան մրան մղեցին աբսուրդային ընկալումների, այնքան էլ նպաստեցին կյանքի տարաբնույթ կողմերի ըմբռնմանը։

Շարունակությունը՝ էջ 7

Անսահման տաղանդավոր ու անսահման հայրենասեր ՌԱԾԱԾԵԼ ԻՍՐԱԾԵԼՅԱԼ — I I O

Սկիզբը՝ էջ 4

...Միթե դրա ապացույցը չէ մաեւ Քանաքեռի գեղատեսիլ այգիների հանդեպ ցուցաբերած էքսկավատորային մոտեցումը։ Տեղ չունենք, ծառ չունենք, այգիներն էլ քանդում ենք...»։

Իսրայելյան այն ճարտարապետներից չէր, որոնք բավարարվում են սոսկ նախագծի վրա քանդակի տեղը մշտելով։ Նա նախագծում էր ոչ միայն ճարտարապետական օբյեկտը, այլեւ քանդակը. համագործակցող քանդակագործին մնում էր մարմնավորում տալ նրա էսքիզներին։ Այդպես են ծնունդ առել Զվարթնոցի ճամփաբաժնի արծիվը, Գեղարդավանքի ճանապարհի հովազը, Արարատի գինեգործարանի մուտքի վերնամասի, Երեւանի հյուսիսային եւ արեւմտյան դարպասների, Քանաքեռում կանգնեցված «Բարեկամություն» հուշակոթողի եւ շատ ուրիշ քանդակներ, մաեւ Սարգստարապետի քանդակային հորինվածքները՝ զույգ ցուլերը, պահապան արծիվները, կիսաշրջան հուշապատի ներսի կողմի քանդակները։

Ճարտարապետ, Մոսկվայի ճարտարապետության տեսության ինստիտուտի տնօրեն Զուրի Յարայովն ասում է. «Մի ավելորդ անգամ ստուգելու համար, թե ճիշտ են արդյոք մարմնավորվում իր հղացումները, նա գնում էր այն շրջաններն ու քաղաքները, ուր շինություններ էին կառուցում իր նախագծերով, եւ անընդհատ կատարելագործում էր դրանց ձեւերն ու տեսքը»։

Վարագդատ Հարությունյանն իր «Ամնոռաց հանդիպումներ. հուշագրություններ» գրքում (Եր., 1998 թ.) գրում է, որ Ռաֆայել Իսրայելյանը նախագծումն ու կառուցումը տանում էր միմյանց զուգահեռ, մի բան, որ հազվադեպ է հանդիպում գործնականում եւ ընդհանրապես չի խրախուսվում։ Մշտապես պրպտող, կատարյալին ձգտող նրա բնավորությունը դժվարությամբ էր կանգ

առնում մի բանի վրա։ Նույնիսկ կառուցման ընթացքում նա սովորություն ուներ վերանայել նախագծերը, փոփոխություններ մտցնել դրանցում, իսկ երբեմն, ինչպես, օրինակ, «Հաղթանակ» մոնումենտի շքամուտքի վարդակազարդ երեսկալը, իրականացման համար ուղղակի նկարում քարի վրա։

«Սարգստարապետի հուշարձանախմբի կառուցման ժամանակաշրջանում, - շարունակում է Վարագդատ Հարությունյանը, - Ռաֆայի մի ոտը Երեւանում էր, մյուսը՝ այնտեղ։ Այդպես լարված ու ինքնամոռաց, ստեղծագործական արտասովոր եռանդով առնեցին են նրան հիշում են մեկ էլ «Հաղթանակ» մոնումենտը նախագծելու եւ կառուցելու տարիներին։ Կազմակերպչական շատ հարցեր ու ծագած խոչընդոտներ նրան ստիպում էին հաճախակի լինել շինարարության վայրում։ Սիրում էր երբեմն էլ ընկերներին հետը տանել։ Հավանում էր ընտրած քարատեսակը՝ հոկտեմբերյանի վառ կարմիր տուֆը, ցավում, որ զանգաշտարակի պատվանդանի համար չհաջողվեց ճարել իր ուզած բազալտը, գովում էր քարտաշ վարպետների բարձրորակ աշխատանքը։

- Կարծում էի՝ այլեւս չեն գտնվի այնպիսի վարպետներ, որ կարողանան լավորակ շարվածք կատարել, քանդակագործել,- ասաց նա, երբ մի առիթով միասին Սարգստարապետ էին գնացել։ Ուրախ են, որ սխալվեցի, ուրախ են, որ հայերի մեջ քարագործության բարձր ավանդները դեռ ապրում են»։

Միշտ հանդիպում էր շինարարների հետ՝ ամենազանազան հարցերով ու առաջարկներով։ Վարպետների հետ լեզու էր գտնում, նրանք էլ ոգեւորվում եւ անթերի աշխատելու պատրաստակամություն էին ցուցաբերում։

Ռաֆայել Իսրայելյանի ճարտարապետական հավատամքի մասին պատկերացում տալու համար Վարագդատ Հարությունյանի հուշերից մեջբերենք եւս մեկ



հատված. «Ընկերս օրգանապես չէր հանդուրժում պլաստիկայից զուրկ, «քանոնային» ճարտարապետությունը, որը, արդիականի թողով պարուրված, հախուռն մուտք է գործում մեզանում՝ հաշվի չնստելով ո՛չ տեղական ավանդույթների ու շինանյութերի, ո՛չ էլ ժողովրդի գեղարվեստական պատկերացումների հետ։ Ներքին բողոք ու ցասում ապրելով՝ Ռաֆոն որոշ տարիներ դադարեց նախագծելուց։ Նույնիսկ բոլորովին թողեց դասախոսական աշխատանքը (չէր կարողանում տեսնել, թե ինչպես իր սաները, հրապուրված մոդայով, պապիկներով արտասահմանյան ամսագրերին, ամստեսում էին իրենց դասատուների խորհուրդները)։ Որոշ տարիներ աշխատեց Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտում՝ զբաղվելով կիրառական արվեստով (կերամիկա, մետաղ)։ Ամսալով իր մտերիմների խորհրդին՝ տարիներ անց

նա մորից վերադարձավ ճարտարապետության ասպարեզ, որպեսզի ստեղծի իր գլուխգործոցները՝ մոր ու հայաշունչ»։

Ռաֆայել Իսրայելյանը, բացի ճարտարապետությունից, զբաղվում էր մաեւ մետաղի դրվագումով, խեցեգործությամբ, ոսկերչությամբ (հախճապակե ամանների, ոսկերչական առարկաների էսքիզներ էր անում), փայտի փորագրությամբ, գրքի ձեւավորումով (հայտնի է նրա հոր կազմած «Պըլը-Պուլի» գիրքը, որի գլխատառերը, գլխագրերը, վերջնագրերը եւ շապիկն արել է Իսրայելյանը), նկարում կրծքանշաններ ու հուշանշաններ, պլակատներ ու էքսլիբրիսներ եւ անում շատ ուրիշ մանա բաներ. ստեղծում կիրառական արվեստի տարբեր ժյուղերի հայեցի մոնուշներ՝ կապված իր հիմնական մասնագիտության հետ։

Շարունակությունը՝ էջ 8

Պահքի խնդիրը «Կանոնագիրք հայոց»-ի Ա ժողովածուում

Սկիզբը՝ թիվ 21

Գանգրայի կանոնախմբի ԻԱ կանոնը (տես նույն տեղում) վերաբերում է Սուրբ Զատկի պահքի հինգշաբթի օրվան, որտեղ ասվում է՝ եթե մեկը քառասնորդաց պահքը պահում է եւ Զատկի հինգշաբթի օրը հաղորդություն է ստանում ու եթե համարձակվի ավելին անել, այսինքն՝ ուտել, իր պահած պահքը կունայնամա եւ կդառնա անիմաստ:

Մեր թեմային է առնչվում նաեւ Լաոդիկեի կանոնախմբի ԽԵ կանոնը (տես «Կանոնագիրք Հայոց», էջ 239), որը կրկնում է մեր

նշած նախորդ կանոնը, իսկ վերջինս էլ վերաբերում էր Քառասնորդաց պահքի հինգշաբթի օրվա ընթացքում պահքը լուծանելուն: Իհարկե դա պատիվ չի բերում, եւ պետք է Քառասնորդքն ամբողջությամբ պահել, թե չէ զրկվում է իմաստից: Եվ նաեւ հստակ նշվում է, որ պետք է աշտուճ, այսինքն՝ ցամաք հաց ուտել մինչեւ պահքի վերջանալը: Բաղդատական տեսանկյունից նայելիս՝ Լաոդիկեի կանոնախմբի ԽԵ կանոնը թերեւս կրկնում էր Գանգրայի կանոնախմբի ԻԱ կանոնը, որից էլ պետք է եզրակացնել, որ պատմության տարբեր ժամանակաշրջաններում խախտվել է կարգը, եւ Քառասնորդաց պահքը չի պահվել մինչեւ վերջ:

Մեզ հետաքրքրող հարցի հաջորդ անդրադարձը հանդիպում է Աթանաս Ալեքսանդրացու «Հարցմունք եւ Պատասխանիք»-ի Է կանոնում (տես «Կանոնագիրք Հայոց», էջ 293), որը վերաբերում է Զատկի պահքի ժամանակ կնոջ ծննդաբերելուն: Եվ հարցնում են Աթանաս Ալեքսանդրացու՝ եթե կինը ծննդաբերում է Զատկի պահքի ժամանակ, պէտք է շարունակի պահք պահել, բայց գինի չըմպել, թե՛ պետք է թույլ տալ: Եվ պատասխանն էլ հետեւյալն է, որ պահքերը սահմանվեցին մարմինը խոնարհեցնելու եւ ոչ թե մարմինը չարչարելու համար: Եվ ինչքան որ կարող է պահել պահքը, թող պահի, համենայնդեպ չի ցուցվում ու խորհուրդ տրվում շատ ուտելը: Այս կանոնն էլ կհամեմատենք Գանգրայի ԺԵ կանոնի հետ: Բաղդատության պատճառը հետեւյալն է. ինչպես Գանգ-

րայի ժողովի համապատասխան կանոնը, այնպես էլ այս կանոնը վերաբերում են պահքին առնչվող մասնավոր դեպքերի, որոնք բխում են պահքի վերաբերյալ ընդհանուր կանոնական ու օրենսդրական հիմքից:

«Հայոց կանոնագիրք» ստեղծող Սահակ Պարթևի կանոնախմբի Խ կանոնում (տես «Կանոնագիրք Հայոց», հատոր Ա, էջ 397) խոսվում է ուխտադրության պահքի մասին, որը բավական հետաքրքրաշարժ է: Այստեղ հիմնականում ասվում է, որ Գրիգորիսը վանքերում է հաստատվել ուխտադրության պահքով: Սրա բացատրությունն այն է, որ վանքի բնակիչներն ուխտավորներ են եւ պահում են շաբաթը, ծոմը, պահքն ընդհանրապես: Մեր կարծիքով՝ խոսքը հենց վանականների մասին է: Եվ Սահակի կանոնախմբում առաջին անգամ հանդիպում ենք պահքի մի տեսակի, որն ուխտադրության պահքն է:

Հովհան Մանգակունու կանոնախմբի Է կանոնը (տես «Կանոնագիրք Հայոց», հատոր Ա, էջ 497) խոսիվ առնչվում է մեր խնդրին: Այն անդրադառնում է Պենտեկոստից առաջ ընկած պահքին, առավել որոշակի՝ այդ պահքի ուրբաթ օրը ծոմ պահելուն: Հայոց կաթողիկոսը հստակորեն սահմանում է, որ ուրբաթ օրը պահք պահել ու դրա հետ մեկտեղ արքեմալը անկարգություն է: Պետք է պահքը պահել մինչեւ ցերեկ, իսկ ուրբաթ օրը պիտի պատվել՝ որպես կիրակի, եւ այդ օրը որեւէ գործով դատարկաբանել մեղք է: Այս որոշումների առկայությունը կանոնագրքում մեզ հուշում է այն մասին, որ չեն պահվել կարգը կամ աստվածադիր օրերը: Իսկ արդեն կանոնների կրկնումը կանոնագրքի տարբեր կանոնախմբերի որոշումներում, ցույց է տալիս, որ անգամ կարգը սահմանելուց հետո չի պահվել օրենքը: Եվ արդեն ստիպված մորից են

դրել կարգը՝ գուցե արդեն որոշ փոփոխումներով՝ սահմանելով ու կանոնակարգելով օրենքի որոշումները: Որպես օրինակ՝ կարող ենք բերել պատկի խորհրդակատարության պարագայում շուրջ 4 դար (4-րդ դարից մինչեւ 8-րդ դարի կես) 3-րդ զարմի արգելքը կրկնելու գաղափարը: Սրանից պարզ է դառնում, որ չի պահվել աստվածադիր կարգը, եւ անընդհատ թարմացվել են կանոնները՝ որոշ փոփոխություններով ու մոդիֆիկացիաներով:

Վերջում եւս մեկ անգամ անդրադառնաք պահքի կարեւորության ու նշանակության խնդրին: Պահքը հիմնավորվում է մարմնի հանդեպ հոգու առաջնայնության սկզբունքով: Ոչ միայն քրիստոնեական, այլեւ մահմեդական ու հուդայական կրոններում պահքը հավատի ամրապնդման միջոց է, որն ունի նաեւ մաքրագործական ու ճգնակեցական նշանակություն (տես «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 843): Նաեւ շատ ենք ցանկանում նշել, որ ներկայումս մուսուլման «պահք» եւ «ծոմ» բառերը նախկինում այլ նշանակություն են ունեցել: «Ծոմ» նշանակել է օրական մեկ անգամ ուտելով՝ պաս պահել, իսկ «պաս» նշանակում էր ընդհանրապես ոչինչ չուտել: Եվ, իհարկե, պահքերը լինում են օրական պահք, շաբաթապահք ու քառասնորդաց պահք, որոնց կիրառությանը մենք ակամատես եղանք «Կանոնագիրք հայոց» ժողովածուի Ա հատորի 24 կանոնախմբերից մի քանիսում: Եվ այդ կանոնների առկայությունը մեզ ստիպում է ենթադրել, թե ինչքան մեծ նշանակություն ու կարեւորություն է ունեցել պահքը հայոց համար: Եվ այդ պատճառով տրվել են բազում կանոններ, որոնց մի մասը վերաբերում էր հենց բուն պահքի արարողական ու բովանդակային խնդրին, իսկ մյուս մասը, եթե իր բուն էությունը չէր վերաբերում պահքին, բայց կապված էր այդ գաղափարի հետ, ինչպես, օրինակ, կարելի է հիշել Զատկի պահքի ժամանակ ծննդաբերած կնոջ հարցը: Այսպիսով՝ մեր թեմային առնչվող կանոնները բավականաչափ են՝ վերլուծական ու բաղդատական աշխատանք կատարելու համար:

Գրք ԳԱԼՍՏՅԱՆ

Արքուհ Ադամովի «Պիեսներն» ու նրա թարգմանությունը

Սկիզբը՝ էջ 6

Իսկ Փարիզի դիմադրական շարժմանը հարելը եւ ապա բանտում հայտնվելը նրան դրոշմաբեր երկակի հայացքով դիտելու աշխարհն ու մարդուն:

Արքուհի դրամատուրգիային բնորոշ խոսքի պայմանականությունների, նաեւ խճողանքի, թերասացության, կերպարների կիսատվածության առատությանը զուգընթաց՝ Ադամովի որոշ գործերում նկատելի են իրատեսական տարրեր. իրականությունից փախուստ տալով հանդերձ՝ նրա որոշ հերոսներ, այնուամենայնիվ, գործում են հենց իրականության մեջ, օժտված են մարդկային հատկանիշներով՝ խոսում են աշխարհում տեղի ունեցող դեպքերի ու երեւոյթների մասին, ուտում են, քնում, քայլում եւ այլն:

Ամեն բան չէ, որ Ադամովի պիեսներում դատապարտված է խառնաշփոթության: Կարգավորվածության օրինակ է «Ներխուժում» պիեսի «Չորրորդ արարի» սկզբում ցուցադրվող պատկերը, որը ներկայացնում է դասավորվածություն սենյակում, այն սենյակում, որտեղ նախկինում ամենուրեք թափփվածություն էր տիրում, եւ ինչպես պիեսի հերոսներից մեկն (մայրը) է ասում, «... ամեն բան իր տեղն է ընկել» (Ադամով Ա., Պիեսներ, եր., 2017, էջ 226):

Գրողն իր պիեսներով ընթերցողին մղում է այլ հայացքով ու այլ դիտանկյունից նայելու մարդկային հարաբերություններին, դրանց մեջ ինքն իրեն տեսնելու մոր կողմերով: Մարդ արարածը երկատված է: Մարդ Աստծոն միայնակ է նաեւ ինքն իր մեջ: Գրողն իր պիեսներում փորձում է աջակից կանգնել ամենօրյա ոճիրների, խեղումների ու բաժանումների մեջ հայտնված հենց այդ մարդուն: Ասենք, որ դատապարտ-


վածության ու բաժանման սինդրոմը նաեւ Ադամովի անձնական ճակատագրում էր՝ բաժանում իր ժողովրդից, ընտանիքից, իր համայնքից:

Ադամովի պիեսներում էլ առատ են այլուռեալիստական տեսարանները՝ վերիրականություն, պայմանականություններ, անսովոր լուծումներ, պատկերների ու խոսքի կտրտվածություններ, հոգեւոր ու ներաշխարհային պոռթկումներ, մտքերի անհսկողություն, բազմաբնույթ պայմանականություններ՝ բեմի վրա խաղացվող երազ, անգո զնացքի մեջ գտնվելու զգացողություն ու վիճակ, բեմի որոշակի հատվածներին տրվող խորհրդանշական իմաստներ, տեղի ու ժամանակի փոփոխականություններ, ներկայացվող դեպքերի անհետեւողականություն եւ տրամաբանական հաջորդականության բացակայություն, երազային տարրերի առատություն (որոշ հերոսներ թեւեւ քնի մեջ չեն, սակայն երազային վիճակում են ապրում ու խոսում), պաշտպանություն այն ամենի, ինչը դեմ է ընդունված կանոններին, իրերին տրվող ուղղակի իմաստներին եւ մարդկային բնական հարաբերություններին:

Ադամովի «Պարոդիա» դրամայում, օրինակ, բոլոր տղամարդիկ սիրահարված են ու սիրո խոստովանություններ են անում մույն անձին՝ Լիլիին՝ որքան թեթեամիտ, մույնքան էլ թեթեալարո մի մանեկնուհու՝ մույնքան «թեթեւ» անվամբ՝ բաղկացած երկու Լ-ից եւ երկու Ի-ից: Ադամովի «Վերագտնում» պիեսի հերոսներից մեկը (Էդգարը) դիպուկ է բնութագրում մարդկային կյանքի խաթարված, պակասավոր ու խեղված այդ վիճակը. «Այս մոլորքը. ցանկանալ ամեն ինչ կարգավորել, դասավորել ամեն բան», - նրանից է, որ մարդկանց,-

«գլխում բացակայում է այդ մույն կարգ ու կանոնը» (մույն տեղում, էջ 107):

Այս ամենի պատճառներից մեկն էլ, ըստ Ադամովի, մարդու տարօրինակ էության հետ է կապված, որը գրողը ձեւակերպել է իր «Բոլոր բոլորի դեմ» գործին տրված վերնագրով: Այդ ամենն Ադամովը ներկայացնում է գրոտեսկի ձեւով, որտեղ հանդիսատեսին գրավողը ժամանակի ու մարդկային հարաբերությունների մորոզի դրսեւորումներն են, երեւոյթների այլաձեւ մեկնությունները, իրերի ձեւախեղումները, չնչին ու երկրորդական խնդիրները բեմ հանելը, որտեղ, ըստ էության, այդպես էլ «ոչինչ չի կատարվում»: Ադամովի հերոսներն իրենց շրջապատում ամեն ինչ շրջված են տեսնում, բայց դա չի նշանակում, թե հեղինակն ուզում է ասել, որ այդ ամենի հակառակը ճշմարիտ է: Այս առումով ներքին խորհուրդ ունի Ադամովի «Վերագտնում» պիեսի վերնագիրը: Վերագտնել: Բայց ի՞նչ. անցյալը, ներկա պարտավորությունները, սերը եւ սիրելու իրավունքը, նախկին երջանկությունը: Վերագտնումի գաղափարը շեշտված է Ադամովի նաեւ մի ուրիշ պիեսում՝ «Եթե ամառը վերադառնար»: Անընդհատ կրկնվող վերադարձի ու



վերագտնումի փորձ, որ իրականում, ինչպես նշում է հեղինակը, «... չորս տարբեր մեջոյների կողմից իրականացվող երազների շարունակությունն է» (մույն տեղում, էջ 128)՝ անընդհատ կրկնվող միեւնույն իրավիճակներով:

Շարունակությունը՝ էջ 8

ԲԱՌԱՍՏԵՂԾ ՏԵՐՅԱՆԸ

Սկիզբը՝ էջ 5

Տերյանը վարպետորեն օգտվել է հայոց լեզվի բառակազմական հմարավորություններից՝ ստեղծելով բարդ եւ ածանցավոր շատ բառեր, որոնք համահունչ են բանաստեղծական բառապաշարին ու տերյանական խոսքին: Բանաստեղծի ստեղծած նոր բառերը հիմնականում համապատասխանում են մեր լեզվի կենսունակ կաղապարներին եւ ունեն գեղարվեստական արժեք: Բանաստեղծական խոսքում ածական+գոյական, գոյական+ածական, մակբայ+բայական, գոյական+ածական, մակբայ+բայական+ածական կաղապարներով կերտված բարդություններն առավելապես մակդրային կիրառություն ունեցող ածականներ են: Դիտարկենք օրինակներ.

«Յեռածավալ» (ածական) – հեռ+ա+ծավալ (մակբայ+բայահիմք)՝ հեռվում ծավալված (բառերի բացատրությունները տրված են ըստ Է. Աղայանի բացատրական բառարանի): «Յեռածավալ անհայտներում պահված» // Գալիք օրերն անհուն, անտես խավարում...» (Մթնշաղի անուրջներ, I, 30): « Դ ի դ ե հ ա վ ա ճ » (ա ծ ա կ ա ն) – հրդեհ+ա+վառ (գոյական+բայահիմք)՝ հրդեհի նման վառվող, փխբ. կրակոտ, վառվում: «...Քո աչքերի խորությունը հրդեհավառ, // Ուր վառված են մութ ցանկության ջահեր անխոս...» (Մթնշաղի անուրջներ, I, 85):

«Սրնգանուշ» (ածական) – սրինգ+անուշ (գոյական+ածական)՝ սրնգի նման անուշ: «Կանչում են ինձ ծայներ, // Ձայներ սրնգանուշ...» (Անտիպ էջեր, II, 85):


« Տ խ ր ա դ ա լ ու կ » (ա ծ ա կ ա ն) – տխուր+ա+դալուկ (ածական+ածական)՝

տխրության դալուկով պատած՝ տխրություն արտահայտող: «Կրծքիս դիր դեմքը քո տխրադալուկ...» (Մթնշաղի անուրջներ, I, 69):

«Քնքուշաբույր» (ածական) – քնքուշ+ա+բույր (ածական+գոյական)՝ քնքուշ բույր ունեցող: «Քնքուշաբույր ծաղիկների թերթերում, // Լույս դաշտերի միրհող օվկիանում...» (Մթնշաղի անուրջներ, I, 100):

Նորաբանությունների մակդրային կիրառությունները, խոսքի պատկերավորությամբ նպաստելու առումով, ոճական բացառիկ արժեք ունեն: Հայտնի է, որ մակդիրն արտահայտում է առարկայի, երևույթի համար ոչ սովորական համարված հատկանիշները: Եթե մակդիրի համար հատկանշականն առարկան, երևույթը նոր կողմով ներկայացնել է, ապա նորաբանությունների մակդրային գործածություններն աչքի են ընկնում հուզական, զգայական անհատական վերաբերմունքի արտահայտման կարողությամբ ու ինքնատիպությամբ:

Ոճական մեծ լիցքով են հատկանշվում ածանցմամբ կազմված նորաբանությունները, ինչպես օրինակ՝ «ամփոփիկ» (Մթնշաղի անուրջներ, I, 98), «նրբագին» (Անտիպ էջեր, II, 41), «սրինգե» (Մթնշաղի անուրջներ, I, 73), «ոսկետուն» (Անտիպ էջեր, II, 107), «դեգերուն» (Անտիպ էջեր, II, 98), «ցնորոտ» (Գիշեր եւ հուշեր, I, 133), «վիրոտ» (Անտիպ էջեր, II, 62), «հոգնածորեն» (Մթնշաղի անուրջներ, I, 78), «ուրվականորեն» (Մթնշաղի անուրջներ, I, 41), «նաիրական» (Ոսկե շղթա, I, 217), «նաիրուհի», «նաիրյան» (Երկիր Նաիրի, I, 252), «նաիրցի» (Երկիր Նաիրի, I, 241), «քրոջական» (Ոսկե հեքիաթ, I, 159), «պրինցուհի»



(Այլ բանաստեղծություններ, I, 279), «գիմնագուհի» (Անտիպ էջեր, II, 109), «հեռաստան» (Մթնշաղի անուրջներ, I, 40), «փոթորկավետ» (Այլ բանաստեղծություններ, I, 261) եւ այլն: Հաճախակի գործածական են հատկապես **ան-** նախածանցով եւ **-ոտ, -ուն, -ե** վերջածանցներով կազմված նորաբանությունները:

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Անսահման աղանդավոր ու անսահման հայրենասեր ՌԱԶԱՅԵԼ ԻՍՐԱԷԼՅԱՆ — I I O



Սկիզբը՝ էջ 4, 6

Կիրառական արվեստի համար արած էսքիզներից մի քանիսն ընդունվել են լայն արտադրության համար: Իսրայելյանի ստեղծած զինանշանների, մեդալների, պետական պարգևների եւ լոգոտիպերի ծագումը, ցավոք, հաճախ չի հիշվում, կամ էլ դրանք համարվում են ժողովրդական ծագման, վատթարագույն դեպքերում՝ վերագրվում այլոց:

Իսրայելյանի համար մեծ ու փոքր, մշակակալի ու անմշան աշխատանքներ գոյություն հավասարապես կարելու էր նրա համար, եւ դրանցից ամեն մեկը կերտում էր միեւնույն եռանդով ու բարեխղճությամբ, ամեն մի մտահղացման ուղղությամբ աշխատելիս ստեղծում էր բազում՝ որակով ու մտքի խոյանքով հավասարազոր տարբերակներ: Լինել կրծքամշան, հրավիրատուն թե հսկայածավալ շինություն, նա մույն ոգեւորությամբ էր աշխատում. դրա բացահայտ վկայությունները գործերի այն բազմաթիվ տարբերակներն են, որ պահպանվել են ճարտարապետի արխիվում: Ասվածը հաստատենք՝ նաեւ Վարազդատ Հարությունյանի հուշերի հետեւյալ հատվածը մեջբերելով.

վաճը մեջբերելով. «Իր ստեղծագործական ըմբռնումների բարդ ներաշխարհում, ենթագիտակցության մեջ ամբարած ողջ հարստությունը նա զարմանալի հունարով կարողանում էր մատուցել նորովի, չկրկնելով ոչինչ եւ ոչ ոքի: Չարմանք էր պատճառում նրա երեւակայության հարստությունը: Միեւնույն ճարտարապետական լուծումը լինել դա գյուղական ակունք թե մենատուն, աղբյուր-հուշարձան թե հերոսամարտի կոթող, զինեզործարան թե թանգարան, ջրի սափոր թե գրքի շապիկ, նա կարողանում էր մեկնաբանել բազմաթիվ եւ մեկը մյուսից հետաքրքիր տարբերակներով:

...Միեւնույն թեման ճարտարապետական բազմապիսի հորինվածքներով մարմնավորելու զարմանահրաշ կարողությամբ իմ արվեստակից ընկերը հիրավի հիշեցնում էր հայ միջնադարի մեծահմուտ վարպետներին»:

Իսրայելյանը նախագծերն ավարտում էր ներկայացնելու ժամկետից շուտ՝ հաճախ օգնելով ընկերներին, մույնիսկ եթե նրանք նախագիծ էին անում մույն մրցույթին ներկայացնելու համար:

Ռաֆայել Իսրայելյանի ճարտարապետական, գեղարվեստական ստեղծագործությունները հայ եւ համաշխարհային ճարտարապետության մեջ զբաղեցնում են լիովին ուրույն, անկրկնելի տեղ: Իսրայելյանի աշխատանքներն աչքի են ընկնում իր արվեստի ստեղծագործությունների հետ:

Ճարտարապետության մեջ զբաղեցնում են լիովին ուրույն, անկրկնելի տեղ: Իսրայելյանական արվեստի մոտիվներն անհնար է շփոթել այլ արվեստագետների ստեղծագործությունների հետ:

Վարպետը երբեմն եղել է համահեղինակ կամ արել հիմնավոր առաջարկություններ, տվել ուղղություն ու գաղափար, բայց չի ցանկացել արձանագրել իր մասնակցությունը. այնուհանդերձ՝ ձեռագիրն ակնհայտ է:

Հայ գաղթաշխարհի բազում համայնքներում իսրայելյանական շինությունները վերարտադրվել են հուշանվերների, քանդակների, բեմական դեկորացիաների, գեղանկարների մեջ, օրինակ՝ Լիբանանի Բիբֆայա քաղաքում գտնվող ցեղասպանության հուշարձանի պահապան ցուլերն ու զանգաշտարակը:

Այսօր եւս Իսրայելյանի նախագծով վեր են խոյանում կառույցներ, օրինակ՝ «Նոյ» գիմու-կոնյակի գործարանի աշտարակը, որը կարճ ժամանակահատվածում դարձավ ֆունկցիոնալ եւ կիրառելի շինություն:

ճարտարապետի արխիվում, իրականացված նախագծերից զատ, կան նաեւ չկառուցված աշխատանքների բազում նախագծեր, ջրաներկ ու գրաֆիկական աշխատանքներ եւ կիրառական արվեստի տարաբնույթ մոտիվների գծագրեր ու էսքիզներ, որոնք ուսումնասիրված եւ մեկնաբանված չեն: Հիշատակենք չիրականացված նախագծերից մեկը. Անտոն Քոչիմյան Իսրայելյանին առաջարկել էր Անիի շրջանի (ներկայիս Շիրակի մարզ) խարկով գյուղում կառուցել մի հյուրանոց, որտեղից պետք է երեւար Անին: Նախագիծն ամենայն ամանամասնություններով պատրաստ էր, անգամ ներքին հարդարանքը, մույնիսկ կահավորանքը, բայց, ցավոք, չիրականացավ:

Շարունակելի

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

Արթուր Ադամովի «Պիեսներն» ու նրա քաղաքականությունը

Սկիզբը՝ էջ 6, 7

Ի տարբերություն աբսուրդի ուղղության մի շարք գործերի՝ Ադամովի պիեսները սարսափ չեն առաջացնում, ավելի՛ն՝ արդարության համար խորհելու տեղիք են տալիս եւ, որ շատ կարելու է, մարդկային ներաշխարհի, մտածողության ու գործելակերպի վերանայման են մղում:

Իհարկե Ադամովի պիեսներում պատկերված աշխարհը լի է խառնաշփոթություններով: Բեմը լեցուն է ոչ միայն զանազան դեկորացիաներով, այլեւ զանազան թղթերով, ճոճանակներով, հեծանիվներով, գրամեքենաներով, «գործում» են իրեր ու հերոսներ, որոնք որեւէ մասնակցություն կամ դեր չունեն (ամուսնացած զույգեր, սլաքներ չունեցող ժամացույց, պատից կախված նկար): Անգամ բեմ են «մտնում» հերոսներ, որոնք գոյություն չունեն: Նույնքան անիմաստ են «գործող» հերոսներին տրված անունները՝ Ամենաերջանիկը կամ անցից, Նույն դերասանուհին («Վերագտնում»), Ն. («Պարողիա»), Ֆրանսիայի բանկը («71-ի գարունը»), Առաջին եկածը («Ներխուժում»): Նրա հերոսներից շատերը ջղային շարժումներով անհավասարակշիռ մարդիկ են, գրեթե միշտ թափփված ու անկայուն՝ իրենց արարքներում: Նրանցից ոմանք չունեն նաեւ ժամանակի զգացողություն եւ անընդհատ հարց են տալիս, թե ժամը քանիսն է: Ժամանակն ինքն էլ անորոշ է ու խանգարված, ինչպես խանգարված են ծավալվող երևույթները, մարդկային հոգիները, վաղուց «*ինքն իրեն*» կորցրած հասարակական հարաբերությունները: Ամեն բան այդ աշխարհում կիսաիրական է ու կիսալուրջ եւ ամբողջական չէ. գործող անձը կարող է տաբատը հանել եւ կնոջ հագուստ հագնել: Բեմական առումով այդ դրվագը որեւէ դեր չի կատարում: Բայց հենց այդ «*անմտության*» մեջ է պարփակված, այսպես ասած, միտքը, անգո միտքը: Մի այլ կերպար բեմում իրեն ներկայացնում է որպես թե մի ուրիշ հերոս եւ հետո վերադառնում որպես ինքը: Այստեղ կարող են երջանիկ լինել... խորտակվելու համար, մահվան... ծնունդ տոնել եւ այլն, եւ այլն, այլ խոսքով՝ իմաստ տալ անմտությանը եւ անմտության մեջ «*իմաստ*» փնտրել: Մղձավանջ, երազ եւ արթնություն, մտքի սեթևեթանք, վարմունքի անիմաստություններ. ամեն, ամեն բան այստեղ խառնված է իրար: Այդ հերոսներն ապրում են անիրականության եւ անորոշությունների հատման աշխարհում. վաղը եւս մույնքան անորոշ է նրանց համար:

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 30.11.2018 թ.

Տպաքանակը՝ 1175